ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հյուսիս-հարավ ճանապահային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 4-ի (Ագարակ-Քաջարան հատված) վարկային համաձայնագրում փոփոխությունների վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

Ա) Ծրագրի նկարագիրը.

- Ծրագիրը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության և Եվրասիական կայունացման ու զարգացման հիմնադրամի միջոցներով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 236 681 000 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ վարկային միջոցներ 150 000 000 ԱՄՆ դոլար և Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորում 86 681 000 ԱՄՆ դոլար: Վարկային համաձայնագրով նախատեսված շինարարության (Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+650-կմ 42+875) շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ հատվածի շինարարություն) արժեքն ըստ հաստատված գնումների պլանի (ներկայացվում է Հավելված 1-ում) կազմում է 247 290 000 ԱՄՆ դոլար (այդ թվում՝ Եվրասիական կայունացման ու զարգացման հիմնադրամ՝ 135 000 000 ԱՄՆ դոլար և ՀՀ համաֆինանսավորում՝ 112 290 000 ԱՄՆ դոլար):
- Մանրամասն նախագծի կազմման համար հայտարարվել էր միջազգային մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Այ Առ Դի Ինջենիրինգ (Իտալիա) և Ջի Փի Ինջեներիա (Իտալիա)» ՀՁ ընկերությունը (այսուհետ՝ Խորհրդատու): 2019 թվականի հունիսի 11-ին կողմերի միջև ստորագրվել են համապատասխան պայմանագրեր՝ նախագծային աշխատանքների իրականացման և շինարարական աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար: Պայմանագրով նախատեսված նախագծման աշխատանքները ժամանակին մեկնարկել են: Իրականացվելիք շինարարական աշխատանքների վերջնական աշխատանքային նախագծին համապատասխանությունն ապահովելու նպատակով, շինարարական աշխատանքների իրականացման փուլում Խորհրդատուն իրականացնելու է նաև հեղինակային հսկողություն:
- 2021 թվականի օգոստոսին Խորհրդատուն ներկայացրել է մանրամասն նախագիծը:
- Նախագիծը բաժանված է 2 լոտի՝
    - ✓ <u>Լոտ 1</u>՝ Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+700-կմ 42+800) և

- ✓ <u>Լոտ 2</u>՝ նախատեսվող Քաջարանի թունելի ելք - Սիսիանի նախատեսվող նոր խաչմերուկ (կմ 0+000-կմ10+700), այդ թվում Քաջարանի թունել (երկարությունը մոտ 7 կմ):

LOS 1 (Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք) – Շինարարության հաշվարկային ժամկետը 3 տարի է
LOS 2 (նախատեսվող Քաջարանի թունելի ելք- Սիսիանի նախատեսվող նոր խաչմերուկ) – Շինարարության հաշվարկային ժամկետը 6 տարի է

- Խորհրդատուի կողմից ներկայացված մանրամասն նախագիծը դիտարկվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի մասնագետների կողմից և անցել է պարզ և համալիր փորձաքննությունները՝ ստացել դրական եզրակացություն: Կապալառուների ձեռք բերման գործընթացը նախնական նախատեսված է 2022 թվականի երրորդ եռամսյակում:

- Համաձայն Խորհրդատուի կողմից նախապատրաստված գնահատման՝ Լոտ 1-ի Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+700-կմ 42+800) շինարարության արժեքը կազմում է 247,294,023 ԱՄՆ դոլար (այդ թվում ԱԱՀ՝ 39,328,964 ԱՄՆ դոլար): Գնահատումը ներկայացվում է ստորև աղյուսակում:

PREPARATION OF DETAILED DESIGN,LAND ACQUISITION AND RESETTLEMENT PLAN OF ABOUT 32 KM ROAD FROM AGARAK TO TUNNEL EXIT;AND PREPARATION OF DETAIL DESIGN, LAND ACQUISITION AND RESETTLEMENT PLAN ON ABOUT 7 KM FROM TUNNEL ENTRANCE TO QUAJARAN AND ABOUT 6 KM OF THE TUNNEL AND ACCESS ROADS (TRANCHE 4) LOT1

ԱԳԱՐԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԹՈՒՆԵԼԻ ԵԼՔ ՄՈՏ 32 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀՀԱՏՎԱԾԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ, ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ, ԹՈՒՆԵԼԻ ՄՈՒՏՔԻՑ ԴԵՊԻ ՔԱՋԱՐԱՆ ՄՈՏ 7 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀՀԱՏՎԱԾԻ, 6 ԿՄ ԹՈՒՆԵԼԻ ԵՎ ԻՋԱՏԵՂԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ, ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ (ՏՐԱՆՇ 4) ԼՈՏ 1

SUMMARY OF BILLS OF QUANTITIES

Ծավալների ամփոփագրի ամփոփ նախահաշիվ

BILL 1	*Ընդհանուր ծախսեր /* *General Items*	*5,921,700.00*
BILL 2	*Հիմնական ճանապարհ /* *Main road*	*73,920,264.00*
BILL 3	*Հենապատեր /* *Retaining walls*	*5,778,114.00*
BILL 4	*Խողովակներ /* *Culverts*	*1,666,614.00*
BILL 5	*Հանգույցներ /* *Interchanges*	*4,364,598.00*
BILL 6	*Ե/բ ուղեանցեր հանգույցների վրա /* *R/c* *overcrossings on interchanges*	*1,910,027.00*
BILL 7	*Ե/բետոնե ուղեանց գյուղտեխնիկայի և անասունների համար /* *R/c animal and agricultural underpass*	*4,894,280.00*
BILL 8	*Այլ աշխատանքներ /* *Others works*	*258,625.00*
BILL 9	*Թունելներ /* *Tunnels*	*25,680,324.65*
BILL 10	*Կամուրջներ /* *Bridges*	*105,980,992.73*
BILL 11	*Կոմունիկացիաներ /* *Utilities*	*5,598,247.48*

A	***ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ (ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳԻՆ) /*** ***SUMMARY OF BILLS (TENDER PRICE)***	***235,973,786.86***
B	*որից 20% -ը ԱԱՀ /* *out of which VAT 20%*	*39,328,964.48*
C	***ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ (ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ) /*** ***PROVISIONAL SUMS IN THE HANDS OF THE EMPLOYER (NON COMPETITVE AMOUNTS)***	***11,320,236.14***
D	*որից շեպերի պաշտպանության և լրացուցիչ երկրաբանական հետազոտությունների համար /* *out of which for slope protections and additional geological investigations*	*5,420,891.47*
E	*չնախատեսված ծախսերի համար /* *out of which contingencies for unexpected costs*	*5,899,344.67*
A+B	***ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ /*** ***PROJECT COST***	***247,294,023.00***

Ծանոթություն /Արժեքը չի ներառում այլ ծախսերը/տեխնիկական և հեղինակային հսկողության համար նախատեսված ծախսեր, չնախատեսված ծախսերի կեսը ներառված է Ծավալների ամփոփագիր 1-11-ում/:

Note: *The price does not include other costs/technical and author supervision costs. Part of contingencies are included in Bills 1 ro 11.*

ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՏՐՎԱԾ ԵՆ ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ԵՎ ՆԵՐԱՌՅԱԼ ԱԱՀ / AMOUNTS ARE IN USD AND VAT INCLUDED

Բ) Փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորում.

1. Վարկային համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների հասանելիության ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն

- 2015 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգավման բանկի (այսուհետ՝ ԵԶԲ) միջև ստորագրվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության (4-րդ հերթ) նախագծի ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին»

համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր): Համաձայն Եվրասիական զարգացման բանկի խորհրդի նախագահի 03.07.2017 թ. թիվ ԵՓՀԲ 17-71 գրության (ներկայացվում է Հավելված 2-ում)՝ Վարկային համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների հասանելիության ժամկետի ավարտ է սահմանված 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքների իրականացման համար կպահանջվի շուրջ 4 տարի, ներառյալ 1 տարի որակի համար նախատեսված երաշխիքային ժամկետը՝ ***<u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը իր լիազորությունների շրջանակում նպատակահարմար է գտնում վարկային միջոցների հասանելիության ժամկետի (մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30–ը) երկարաձգման վավերացումը:</u>***

2. Վարկային համաձայնագրով Լոտ 1 Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+700-կմ 42+800) 32 կմ ընդհանուր երկարությամբ հատվածի շինարարարությունը իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցների ավելացման անհրաժեշտություն

- 2014-2015 թվականներին «Էջիս Ինթերնեյշնլ» (Ֆրանսիա) կազմակերպության կողմից իրականացվել է Ագարակ-Քաջարան հատվածի նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, որի արդյունքում նախապատրաստվել է համապատասխան հաշվետվություն, որով հետագա բարելավման և մշակման համար առաջարկվել է նշված ճանապարհային միջանցքի երկու տարբերակ՝A1 և A2: Նշված հաշվետվությունը հիմք է հանդիսացել Եվրասիական զարգացման բանկի հետ վարկային համաձայնագրի շուրջ բանակցությունների համար:
- 2019 թվականին «Այ Առ Դի Ինջենիրինգ (Իտալիա) և Ջի Փի Ինջեներիա (Իտալիա)» ՀՋ ընկերության կողմից սկսվել են մանրամասն նախագծի մշակման աշխատանքները: Իրականացված մանրամասն ինժեներական հետազոտություններից պարզ դարձավ, որ 2014-2015 թվականներին «Էջիս Ինթերնեյշնլ» (Ֆրանսիա) կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության հաշվետվությունում տեղ են գտել որոշ բացթողումներ, ինչը արձանագրվել է «Այ Առ Դի Ինջենիրինգ (Իտալիա) և Ջի Փի Ինջեներիա (Իտալիա)»

ՀՁ ընկերության 2019 թվականի դեկտեմբեր ամսվա ամսական հաշվետվությունում: Մասնավորապես նշվել են հետևյալ բացթողումները՝

- ✓ Ծրագծի սկզբնակետը (կմ 0+000, դեպի Քաջարան տանող գոյություն ունեցող ճանապարհի հետ միացման կետ) մոտ 20 մ ավելի բարձր է, քան գոյություն ունեցող ճանապարհը: Նշվել է, որ այս տարբերությունը հնարավոր է առաջացել է այն պատճառով, որ «Էջիս Ինթերնեյշնլ» (Ֆրանսիա) կողմից կիրառվել է այլ կոորդինատային համակարգ, կամ ուսումնասիրության/չափագրման արդյունքները սխալ են:
- ✓ Տեխնիկատնտեսական հաշվետվությունում ներկայացված չէ Սիսիան-Քաջարան (մոտ 4.4 կմ) հատվածի վերջնամասին միացումը:
- ✓ Տեխնիկատնտեսական հաշվետվությունում ներկայացված չէ Քաջարանի ճանապարհի հանգույցը:
- ✓ Գոյություն ունեցող Մ2 ճանապարհի հետ հատման հատվածներում նախատեսվում են մեծ ծավալի փորման աշխատանքներ/ հանույթներ:
- ✓ Թունելի երկարությունը 4750 մ է և հյուսիսային ճակատամուտքը նախատեսված շինաշխատանքների համար դժվարհասանելի հատվածում է:
- ✓ Նախնական հաշվարկը վերաբերվում է միայն 20 կմ երկարությամբ ճանապարհին, այն դեպքում, երբ Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք հատվածի երկարությունը կազմում է շուրջ 32 կմ:
- ✓ Կոմունիկացիաների տեղափոխումը և Լիճքի ճանապարհի միացումը ներառված չեն:
- ✓ 400 մ երկարությամբ թունելը Մեղրիի շրջանցիկ ճանապարհի հատվածում չի դիտարկվել ծախսերի հաշվարկում:
- ✓ Բնապահպանական խնդիրներ՝ մեծ մասշտաբի հողային աշխատանքների և մուտք ազգային պարկի տարածք:

- Ելնելով վերոգրյալ խնդիրներից և հաշվի առնելով «Այ Առ Դի Ինջենիրինգ (Իտալիա) և Ջի Փի Ինջեներիա (Իտալիա)» ՀՁ ընկերությանը Պայմանագրով տրված տեխնիկական առաջադրանքը՝ Խորհրդատուն իրականացրել է լրացուցիչ հետազոտական աշխատանքներ, որոնց հիման վրա նախապատրաստվել է Ագարակ-Քաջարանի հատվածի նոր ծրագիծ և առաջարկել է նոր նախագծային լուծում (BLUE80): Նշված լուծումը հաստատվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի

ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) կողմից (ներկայացվում է Հավելված 3-ում):

- Խորհրդատուն նախապատրաստել է նախնական նախագիծ, որի համաձայն Լոտ 1 Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+700-կմ 42+800) 32 կմ ընդհանուր երկարությամբ հատվածի շինարարարության նախնական արժեքը կազմել է շուրջ 250 մլն. ԱՄՆ դոլար (ներառյալ ԱԱՀ), ինչը շուրջ 85 մլն. ԱՄՆ դոլարով գերազանցում է ծրագրի սկզբում հաստատված գնումների պլանով շինարարության համար նախատեսված ֆինանսական միջոցները:
- Նախնական նախագիծը, նախնական հաշվարկը և շինարարության համար պակաս գումարի խնդիրը քննարկվել է 2021 թվականի մարտի 5-ի Կառավարման խորհրդի նիստում: Կառավարման խորհրդի թիվ ՓՎ19-2021 արձանագրության 6-րդ մասի 2-րդ կետի 2-րդ ենթակետով (ներկայացվում է Հավելված 4-ում) սահմանվել է Ծրագրի Ագարակ–Քաջարան 32 կմ ճանապարհահատվածի շինարարության ֆինանսական միջոցների պակասը (շուրջ 85 մլն. ԱՄՆ դոլար, ներառյալ ԱԱՀ) պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման անհրաժեշտությունը՝ Ծրագրի համաֆինանսավորման համապատասխան չափի ավելացման եղանակով: Նշված խնդրի մասին տեղեկացվել է նաև Եվրասիական զարգացման բանկը:
- 2021 թվականի օգոստոսին Խորհրդատուն ներկայացրել է Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+700-կմ 42+800) ճանապարհահատվածի մանրամասն նախագիծը և շինարարության արժեքը, որը կազմում է 247,294,023 ԱՄՆ դոլար (այդ թվում ԱԱՀ՝ 39,328,964.48 ԱՄՆ դոլար):
- Հաշվի առնելով նշված հանգամանքները և Ագարակ-նախատեսվող Քաջարանի թունելի մուտք (կմ 10+700-կմ 42+800) հատվածի շուրջ 32 կմ ընդհանուր երկարությամբ հատվածի շինարարության համար նախատեսված ֆինանսական միջոցների պակասուրդը (շուրջ 85 մլն. ԱՄՆ դոլար, ներառյալ ԱԱՀ), ***ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը իր լիազորությունների շրջանակում նպատակահարմար է գտնում վարկային համաձայնագրում Ծրագրի համաֆինանսավորման վերաբերյալ համապատասխան դրույթների փոփոխությունների վավերացումը***:

Տարածքային կառավարման և